

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**ԿԱԶՄԱԴՐՈՒՄ «ԱՐՄԱՏՆԵՐ»
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՅԱՆՃՆԱԽՈՒՄԲԻ**

19 Յուլիս, 2019-ին, Երրուսաղէմի Հայ գաղութի երիտասարդները այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Այցի ընթացքին տեղի ունեցաւ խորհրդակցական ժողով մը, որու ընթացքին գնահատելով եւ արժեւորելով Երրուսաղէմի հայկական դարաւոր ներկայութեան պատմական փաստը եւ հայ ազգի ունեցած խոր հոգեւոր կապը այս Սուրբ Երկրին հետ, Հայկական հաստատութիւններուն եւ անոնց իրաւունքներուն պաշտպան կանգնելու մտօք, հոգեւոր, մշակութային եւ ազգային արմատներուն հաւատարիմ մնալու եւ զանոնք զարգացնելու տեսլականով բանաձեւուեցաւ եւ կազմաւորուեցաւ գաղութի երիտասարդներէն բաղկացեալ Յանձնախումբ մը, եւ որոշուեցաւ զայն անուանել «ԱՐՄԱՏՆԵՐ» շեշտելու համար կապը մեր աղունքներուն հետ եւ այդ ուղղութեամբ պատրաստելու գիտակից եւ արթուն սերունդներ:

«ԱՐՄԱՏՆԵՐ» Երիտասարդաց Յանձնախումբը պիտի զբաղի գաղութէն ներս առկայ զանազան խնդիրներու քննութեամբ.

- * Սուրբ Երկրի քաղաքական եւ ընկերային խառն իրավիճակ
- * Սաղիմահայութեան թուի նոսրացում:
- * Սաղիմահայութեան ներգաղութային ստեղծուած անհանդուրժողական վիճակ:
- * Սաղիմահայերու հատուածի մը անտարբերութիւնը գաղութին, եկեղեցիին, Պատրիարքութեան եւ այլ արժէքներու հանդէպ:
- * Հայ երիտասարդութեան կրթական, տնտեսական եւ ընկերային աննպաստ իրավիճակ:

Վերոնշեալ խնդիրները պատճառ հանդիսացան սոյն Յանձնախումբը կեանքի կոչելու, որուն նպատակն է. աշխատիլ պահպանելու եւ զարգացնելու հայկական ինքնութիւնը եւ ներկայութիւնը Երրուսաղէմի մէջ:

Իր նպատակին հասնելու համար, «ԱՐՄԱՏՆԵՐ» Յանձնախումբը առաջին հերթին պիտի գործէ հետեւեալ ուղղութեամբ՝

ա.- Մշակութային - աշխուժացնել հայկական մշակութային կեանքը եւ այդ գործին ներմուծել գաղութի անդամները, յատկապէս երիտասարդութիւնը: Նաեւ, հայկական հարուստ մշակոյթը մատչելի դարձնել քաղաքի եւ ինչու չէ, երկրին մէջ բնակող այլ համայնքներուն:

բ.- Ընկերային - ստեղծել տնտեսապէս բարենպաստ յարմարութիւններ գաղութի երիտասարդութեան համար յոյս ներշնչելու եւ քաջալերելու անոնց հաստատուիլ այս երկրին մէջ եւ իրենց ծառայութիւնը բերել գաղութին բարգաւաճման գործին: Նաեւ աշխատիլ Սաղիմահայութեան կեանքի մակարդակի բարձրացման ուղղութեամբ:

«Սիոն» «Արմատներ» Երիտասարդաց Յանձնախումբի գործունէութեան կը մաղթէ յաջողութիւն եւ յարատեւութիւն: